զիս՝ գտանել կամիս յինէն: *33* Կա՛ց ուր եւ կամիս, բայց ի գործոյ կաթողիկոսութեանդ հեռի ես, եւ չէ քո»:

34 Եւ լուեալ զայս սրբոյ կաթողիկոսին Հայոց Գիւտայ՝ մասամբ միով ուրախացաւ, եւ միւսով եւս մասամբ տրտմեցաւ մինչեւ ի մահ. քանզի լուեալ, թէ ի գործոյն[1] ի բաց եղեւ՝ ուրախացաւ, հանգչելով ի զբաւսանաց աշխարհիս. եւ լուեալ, թէ ոչ կապանաց ել հրաման ի թագաւորէն վասն նորա եւ ոչ մահու, որում ցանկանայր ի բազում ժամանակաց, տենչայր լինել արժանի՝ խռովեալ տրտմէր անմխիթար վասն չպատահելոյ ցանկալի եւ մեծ խնդրոյն, որում փափագեալն էր[2] հասանել:

35 Կացեալ այնուհետեւ ի դրան ըստ իւրում կամելոյ սուրբ կաթողիկոսն Հայոց Գիւտ, բազում համարձակութեամբ պատուեալ, ոչ միայն ի քահանայիցն եւ ի քրիստոնէիցն, այլ եւ առաւել ի հեթանոսացն, որ իւրաքանչիւր ախտից գտանէին զբժշկութիւն[3] յաղաւթից սրբոյն. եւ այլք ի քրիստոնէիցն կողմանցն այնոցիկ ցանկանային ի սուրբ աջոյ առն Աստուծոյ գտանել ձեռնադրութիւն: *36* Յորոց զոմանս ձեռնադրէր յեպիսկոպոսութիւն, եւ զայլս բազումս յաստիճան երիցութեան կարգէր: *37* Եւ այսպէս պատուեալ յամենեցունց՝ ուրախալից շքեղութեամբ հրաժարէր գնալ յաշխարհն Հայոց. աւրհնեալ զամենեսեան յանձն առնէր Աստուծոյ, յուղի անկեալ գնայր յաշխարհն Հայոց: *38* Եւ կեցեալ առաւելապէս պատուովք քան զառաջինն ի Հայս՝ հանգչէր երկայն ծերութեամբ, եւ եդեալ ի դիրս հարց իւրոց խաղաղութեամբ ի գեաւղն, որ կոչի Ոդմսու գեաւղ, ի գաւառին Վանանդայ: *39* Եթող աւրհնութեամբ զամենայն ժողովուրդն սուրբ եկեղեցեացս Հայոց:

ԿԵ. Եկեալ ի դրանէ եւ Մաղխազն Գադիշոյ, եւ ժողովեալք առ նա դասք ուրացողացն. որ թէպէտ եւ ուրախանային զառժամանակեայ թաղծալից ուրախութիւն կենցաղոյս՝ սակայն իբրեւ տեսանէին զՄամիկոնեանն Վահան այնպէս երեւելի յաճմունս[4] բարւոյ համակեալ՝ ներկեալք[5] խամրէին եւ ծնկեալք թարշամէին: *2* Խնդրէին ի վերայ նորա հնարս պատճառանաց, որով զնա եւ զեղբարս նորա կորուսանել կարասցեն: *3* Տային գիտել մեծամեծաց դրանն, այլ էր ինչ որ եւ[6] թագաւորին, թէ ոչ է հնար սմա առանց ապստամբութեան կալ[7] ի Հայս: *4* Յիշեցուցանէին Արեաց եւ զնախնեացն նորա զմիոյ միոյ, թէ ո՛վ ի նոցանէ ոչ խռովեցոյց զԱրեաց աշխարհ եւ ոչ արար մե-

1 *SS.* եթէ ի գործոյն
2 *SS.* որում փափաքէր
3 *SS.* բժշկութիւն
4 *Կամ ըստ Զ.* յերեւելի աճմունս
5 *Թերեւս՝* ներկեւեալք *(Ն. Բ.)*
6 *SS.* էր ինչ եւ որ
7 *SS.* կեալ. *Զ. նախ՝* կեալ, *ապա՝* ե-ն *քերած*